Կարգապահական գործ թիվ 19078

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի օգոստոսի 27-ի թիվ 176-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/112-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐԻԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մարիամ Աբրահամյանին (արտոնագիր՝ 490) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

08.04.2019թ. Պալատ է մուտքագրվել Աշոտ Բունիաթյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որում հայտնվել է, որ 2017թ. փետրվար ամսին Դիմողը դիմել է փաստաբան Մարիամ Աբրահամյանին «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության դեմ վնասների հատուցման գործով իր շահերը ներկայացնելու համար: Փաստաբանը և Դիմողը ձեռք են բերել համաձայնություն, և Դիմողը Մարիամ Աբրահամյանին վճարել է պայմանավորված հոնորարը, ստորագրել է դատարան դիմելու և այլ անհրաժեշտ փաստաթղթերը: Քանի որ փաստաբանը բնակվում է Երևան քաղաքում, Դիմողը փաստաթղթերը հանձնել է փաստաբանի՝ Սաթենիկ անունով աշխատակցին և սպասել է, որ Մարիամ Աբրահամյանն իրեն ուղարկի պայմանագիրը: Մի քանի ամիս անց Դիմողը նորից դիմել է Մարիամ Աբրահամյանին՝ պարզելու համար գործը ընթացքը և տեղեկանալու պայմանագրի ստացման ժամկետի մասին: Փաստաբանը պատասխանել է, որ հերթերի պատճառով դատը հետաձգվում է, իսկ պայմանագիրը մոռացել է: Այնուհետև

Դիմողը կրկին դիմել է փաստաբանին և ստացել է միևնույն պատճառաբանությունները: 08.02.2019թ.՝ իրենց վերջին հանդիպման ժամանակ, փաստաբան Մարիամ Աբրահամյանը խոստացել է Երևան գալիս անմիջապես էլեկտրոնային փոստով ուղարկել պայմանագիրը և դատարանի դիմումի պատճենը, սակայն մինչ այժմ Դիմողը դրանք չի ստացել: Այժմ փաստաբանը խուսափում է Դիմողի հետ հանդիպելուց և նրա զանգերին չի պատասխանում: 08.02.2019թ.՝ ժամը 14:00-ին, Դիմողը ներկայացել է դատարան՝ պարզելու համար՝ արդյոք իր անունից դիմում է ներկայացվել դատարան և ստացել է բացասական պատասխան:

Դիմողը խնդրում է Պալատին փաստաբան Մարիամ Աբրահամյանի դեմ հարուցել կարգապահական վարույթ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 10.05.2019թ. թիվ 166-Ա/ԿԳ-19078 որոշմամբ փաստաբան Մարիամ Պետրոսյանի նկատմամբ և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.7.2, 3.1.3 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործը 15.05.2019թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Հայկ Պետրոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Դիմող Աշոտ Բունիաթյանը 17.06.2019թ. Նախապատրաստողին հայտնել է, որ պնդում է իր դիմումում ներկայացված փաստերը:

Խորհրդի նիստին Դիմողը վերահաստատել է իր դիրքորոշումը:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

21.05.2019թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանող Մարիամ Աբրահամյանի բացատրությունը, որում հայտնվել է հետևյալը:

01.03.2019թ. Դիմողի և Պատասխանողի միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր: Պայմանագրի 7.1 կետի համաձայն՝ պայմանագիրը կնքվել է երկու օրինակից, և մեկ օրինակը տրամադրվել է Դիմողին: Պայմանագրի հիման վրա բանկային փոխանցմամբ վճարվել է 40,000 ՀՀ դրամ որպես ծառայությունների մատուցման գումար:

Ըստ Պատասխանողի՝ Դիմողը, բացի Պատասխանողին 195,000 ՀՀ դրամ գումարի

վճարման անդորրագրի պատճենից, այլ ապացույցներ կամ փաստաթղթեր չի ներկայացրել, մնացած ապացույցները պետք է պահանջվեին փաստաբանի գրություններով: Դիմողը նույնիսկ չի տրամադրել իր անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ դրա բացակայությամբ՝ փաստաբանը չի կարող իրականացնել պատվիրատուի շահերի պաշպանությունը:

Պատասխանողը դեռևս 2017թ. Դիմողի ոչ պատշաճ վարքագծի պատճառով հրաժարվել է նրան ծառայություններ մատուցելուց և բազմիցս հայտնել նրան, որ տրամադրի տեղեկություններ, թե ինչ կարգով իրեն պետք է փոխանցվի ծառայությունների մատուցման համար վճարված գումարը՝ 40, 000 ՀՀ դրամը, և հետ վերադարձվի իր կողմից ներկայացված պատճենը:

Պատասխանողը պնդում է, որ ինչպես երկու տարի առաջ, այնպես էլ այժմ, հրաժարվում է Դիմողին ծառայություններ մատուցելուց՝ անհրաժեշտ փաստաթղթեր չտրամադրելու և իր պահվածքի պատճառով:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը 24.06.2019թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 16.07.2019 թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 27.08.2019թ., ժամը 18:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկի թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ նաև Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Դիմող Աշոտ Բունիաթյանը հանդիսանում է Պատասխանող փաստաբան Մարիամ

Պետրոսյանի վստահորդը,

- Դիմող Աշոտ Բունիաթյանի և Պատասխանող Մարիամ Պետրոսյանի միջև կնքվել է ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր,
- Պատասխանող Մարիամ Պետրոսյանը Դիմող Աշոտ Բունիաթյանին չի մատուցել կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունները, մասնավորապես, դատարան չի ներկայացրել հայցադիմում:

Նշված հանգամանքները հաստատվում են կարգապահական գործի նյութերով, մասնավորապես, Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ, Դիմողի և Պատասխանողի միջև 01.03.2017թ. կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Մարիամ Աբրահամյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006թ-ից, և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (2 ավարտված վարույթ)՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Պալատի խորհրդի 30.01.2015թ. թիվ ԿԳ/14-Ա որոշմամբ փաստաբան Մարիամ Աբրահամյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:

Պալատի խորհրդի 16.10.2015թ. թիվ ԿԳ/156-Ա որոշմամբ փաստաբան Մարիամ Աբրահամյանը անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն, որը մարվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մարիամ Աբարհամյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.7.2 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.1.3 ենթակետի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1 Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտման մասով

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ*

գործողությունների կատարում:

Կանոնագրքի նշված կանոնի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի մասնագիտական բարեխղճությունը ներառում է երկու բաղադրիչի միաժամանակյա առկայություն՝ փաստաբանի մասնագիտական պատրաստվածություն՝ իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն և բարեխիղճ վերաբերմունք վստահորդի իրավական խնդրի լուծման նկատմամբ՝ վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում՝ մշտապես առաջնորդվելով վստահորդի լավագույն շահերով:

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով;*

Սահմանադիրը վերոնշյալ իրավադրույթի միջոցով փաստաբանությանը վերապահում է սահմանադրաիրավական կարգավիճակ՝ փաստաբանության ինստիտուտը դիտարկելով որպես անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման՝ պետության պոզիտիվ պարտականության հիմնական կառուցակարգ: Ավելին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր **05.04.2016թ. թիվ 1263 որոշմամբ** հստակորեն արձանագրել է, որ. *«2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս...: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը:»:* Այսինքն՝ սահմանադրական դատարանն իր նշված իրավամեկնաբանությամբ ընդլայնել է փաստաբանության ինստիտուտի իրավական նշանակությունը որպես ոչ միայն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման ապահովմանն ուղղված հատուկ սահմանադրական ինստիտուտ, այլև փաստաբանության առջև փաստացի դրել է պարտականություն՝ այդ իրավաբանական օգնությունն իրականացնել որակյալ կերպով:

Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշման վերոնշյալ դրույթների հետ համահունչ է **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը**, որի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Վերոնշյալ իրավադրույթների հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի սահմանադրաիրավական և լայն առումով հանրային կարգավիճակի և կոչման, ինչպես նաև վերջիններիս հանրային ընկալման առանցքային տարրերն են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես

իրավապաշտպան և արդարադատության իրականացմանը նպաստող գործառույթներ կատարող անձի հանրային-իրավական նշանակությունը:

Սույն պարագայում Պալատը հաստատված է համարում հետևյալ փաստերը. Դիմողը հանդիսացել է Պատասխանողի վստահորդը, և Պատասխանողը՝ որպես Դիմողի ներկայացուցիչ չի իրականացրել կողմերի միջև 01.03.2017թ. կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված պարտականությունները, այն է՝ չի իրականացրել Դիմողի շահերի պաշտպանություն ՀՀ ընդհանուր իրավասության դատարանում: Պատասխանողն իր բացատրության մեջ ընդունել է Դիմողին փաստաբանական ծառայություն չմատուցելու փաստը՝ դա պայմանավորելով նրանով, որ Դիմողը որևէ վերաբերելի փաստաթուղթ և տեղեկություն՝ ներառյալ անձը հաստատող փաստաթուղթ չի ներկայացրել, որպեսզի հնարավոր լիներ իրականացնել նրա շահերի պաշտպանությունը, ինչպես նաև պնդում է, որ նշյալ պատճառով, ինչպես նաև այն պատճառով, որ Դիմողը դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ, ինքը հրաժարվել է Դիմողին ծառայություն մատուցելուց:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագիծը հակասում է Դիմողին բարեխիղճ և որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու Պատասխանողի պարտականությանը, քանի որ Դիմողը տվյալ դեպքում չի առաջնորդվել Դիմողի շահերով և չի իրականացրել հանձնարարության կատարման համար անհրաժեշտ գործողություններ և իր նշված վարքագծով խախտել է Կանոնագրքի 2.7.2 ենթակետը:

Ինչ վերաբերում է Պատասխանողի այն պնդումներին, որ Դիմողը որևէ վերաբերելի փաստաթուղթ և տեղեկություն՝ ներառյալ անձը հաստատող փաստաթուղթ չի ներկայացրել, որպեսզի հնարավոր լիներ իրականացնել նրա շահերի պաշտպանություն, որն անհնարին էր դարձնում Դիմողի շահերի պաշտպանությունը, ինչպես նաև, որ Դիմողը դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ, որպիսի պատճառներով ինքը հրաժարվել է Դիմողին ծառայություն մատուցելուց, ապա Խորհուրդը հարկ է համարում նշել, որ Պատասխանողն ընդունում է, որ իր կողմից Դիմողին մատուցվող ծառայությունների շրջանակներում պետք է ձեռք բերեր որոշակի փաստաթղթեր, ինչը չի արել: Այսինքն՝ Պատասխանողն ընդունում է իր կողմից փաստաբանական ծառայության ոչ պատշաճ մատուցումը Դիմողին, սակայն չի ներկայացնում բավարար և պատշաճ ապացույցներ ծառայության պատշաճ մատուցումն անհնարին դարձնող հանգամանքների մասին:

Վերոնշյալի հիման վրա Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը, չիրականացնելով Դիմողի շահերի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ գործողություններ, խախտել է Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջները:

7.2 Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման մասով

Կանոնագրքի 3.6.1 համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Փաստաբանի կողմից վստահորդին վերջինիս գործի ընթացքի մասին իրազեկելը և վստահորդի հարցերին պատասխանելը փաստաբանի մասնագիտական բարեխղճության կարևոր չափանիշներից մեկն է, ինչպես նաև փաստաբանական ծառայության պատշաճ

մատուցման բաղադրիչներից է: Ընդ որում, նշյալ ենթակետի խախտում կարող է համարվել և՛ վստահորդի հեռախոսազանգերին, էլեկտրոնային հաղորդագրություններին կամ կապի այլ միջոցներով ուղարկված նամակներին փաստաբանի անզգուշորեն կամ անփութությամբ չպատասխանելը, և՛ նշված վարքագծի դրսևորումը դիտավորությամբ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում անձնական նախաձեռնությամբ վստահորդին հանձնարարության ընթացքի մասին փաստաբանի չտեղեկացնելը:

Սույն փաստը Պատասխանողն ընդունել է՝ նշելով, որ Դիմողի ոչ պատշաճ վարքագծի հետևանքով ինքը չի ցանկացել նրան փաստաբանական ծառայություն մատուցել:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը պարտավոր էր ինչպես անձամբ Դիմողին տեղեկացնել վերջինիս գործի ընթացքի մասին, այնպես էլ՝ պատասխանել նրա հեռախոսազանգերին և պատասխանել գործին վերաբերող նրան հետաքրքրող հարցերին, որպիսի պարտականությունը Պատասխանողն ընդունում է, որ չի կատարել, Անդրադառնալով Պատասխանողի այն դիրքորոշմանը, որ ինքը չի ցանկացել Դիմողին փաստաբանական ծառայություն մատուցել, Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի և Պատասխանողի միջև կնքված պայմանագիրը չի լուծվել:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պալատը գտնում է, որ Պատասխանողի կողմից խախտվել է Կանոնագրքի 3.6.1 ենթակետը:

7.3 Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Պալատի խորհուրդը, հաշվի առնելով Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանի նկատմամբ պետք է կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը և իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով՝ 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

7.4 Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման մասով

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ *գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Իր դիմումում Դիմողը պնդում է, որ հակառակ իր պահանջների՝ իր և

Պատասխանողի միջև ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր չի կնքվել: Մինչդեռ, Պատասխանողի կողմից Պալատին է ներկայացվել Դիմողի հետ 01.03.2017թ. կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը: Վերոնշյալի հիման վրա Պալատը գտնում է, որ Պատասխանողի վարքագծում Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման հատկանիշներ առկա չեն:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 3-րդ մասի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մարիամ Աբրահամյանին (արտոնագիր՝ 490) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.7.2 և 3.6.1 ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Աբրահամյանի (արտոնագիր՝ 490) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով՝ 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Փաստաբան Մարիամ Աբրահամյանի (արտոնագիր՝ 490) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.3 ենթակետի մասով կարճել:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան

27 օգոստոսի 2019թ.
թիվ ԿԳ/112-Ա
ք. Երևան